Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման գործիքների կիրառումը (ձևերը և միջոցները) և դրանց ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը

Հաստատություն՝ Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Ա. Գրիգորյանի անվան «Ծիծեռնակ» Մ/Մ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Արփինե Քարամյան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման գործիքների կիրառումը (ձևերը և միջոցները) և դրանց ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը 5

1.1. ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ 5

1.2. ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱԴԱՊՏԱՑԻԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ 12

Գլուխ 2. Հետազոտական աշխատանք 15

Եզրակացություն 18

Գրականության ցանկ 20

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ մանկապարտեզներում համընդհանուր ներառական կրթության անցման քաղաքականությունը բավականին հավակնոտ է Հայաստանի համար, քանզի այն ենթադրում է ոչ միայն հատուկ կարիքներ ունեցող երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպում հանրակրթական դպրոցներում, այլև նախադպրոցական կրթության օպերացիոն համակարգի համընդհանուր փոփոխություն: Համընդհանուր ներառական կրթական համակարգը ենթադրում է կրթության էկոլոգիայի և աշխատառճի արմատական փոփոխությունների անընդհատ և հարատև աշխատանք:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության գործընթացում, ինչպես նաև առանձնահատուկ կարիքների բացահայտման գործընթացը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առաջադրված նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել ներառական կրթության կազմակերպման առանձնահատկությունները նախադպրոցական ուսումնական հաստատություններում:
- Ուսումնասիրել դաստիարակի դերը ներառական կրթության գործընթացում:
- Բացահայտել բնականոն զարգացում ունեցող և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հուզակամային ոլորտի դրսևորումները և նրանց փոխհարաբերությունները ներառական կրթության գործընթացում:
- Ներկայացնել ԿԱՊԿՈՒ երեխաների ինքնագիտակցության ձևավորման մանկավարժական պայմանները ներառական կրթության համատեքստում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հետազոտության համար հիմք են գրականության ուսումնասիրման և համեմատական վերլուծության, առաջավոր փորձի ուսումնասիրման ու

ընդհանրացման, զրույցների մեթոդները, իսկ մեթոդաբանական հիմք են ծառայել մանկավարժության մի շարք տեսություններ, հումանիստական մանկավարժության և հոգեբանության վերաբերյալ գաղափարներ, ինչպես նաև դպրոցներում ներառական կրթության կազմակերպման ուսումնասիրություններ ու մշակումներ (Ա. Յա. Վարլամովա, Ռ. Վ. Օվչարովա, Ա. Կ. Մարկովա, Ն. Լ. Վասիլևա, Ե. Ի. Աֆանասևա և այլն):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ավարտական աշխատանքը բաղկացած է <<Ներածությունից>>, երկու գլխից, որոնք ընդգրկում են չորս ենթագլուխ, <<Եզրակացությունից>>, <<Գրականության ցանկից>>:

Ընդհանուր ծավալը կազմում է 21 համակարգչային էջ:

Գլուխ 1. Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման գործիքների կիրառումը (ձևերը և միջոցները) և դրանց ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը

1.1. ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի կրթությունը կազմակերպվում է նրա ԱՈՒՊ-ում սահմանված նպատակներին համապատասխան: Յուրաքանչյուր պարապմունք պլանավորելիս պետք է նախատեսել ԿԱՊԿՈՒ սովորողի՝ մյուս դասընկերների հետ համատեղ աշխատանքի կազմակերպումը: Պարապմունքը կազմվում է հետևյալ հաջորդականությամբ. Նախ հստակեցվում են ուսուցանվող նյութի կառուցվածքը, բովանդակությունը, ապա իրականացվում են գործողություններ, որոնք արտացոլում են յուրաքանչյուր սանի և ընդհանուր խմբի պահանջները [1] :Ներառական կրթության կազմակերպման նպատակով յուրաքանչյուր երեխայի համար կազմվում է անհատական աջակցման պլան,որը կազմված է երկու բաղադրիչից՝

- անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ): Այս փաստաթուղթում սահմանվում են ԿԱՊԿՈՒ երեխայի ուսումնական, սոցիալական և ֆունկցիոնալ առանձնահատուկ նպատակները:
- մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլան (ՄԱԾԱՊ), այս փաստաթուղթ ներկայացնում է երեխայի ուսումնական, սոցիալական և ֆունկցիոնալ նպատակներին հասնելու յուրահատուկ միջամտությունները:

Վերոնշյալ փաստաթղթերը էական նշանակություն ունեն նախադպրոցական ուսումնական հաստատությունում, որովհետև ներառական միջավայրում յուրաքանչյուր

[1] Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ձեռնարկ. -Երևան: 2017. 146 էջ: էջ 133 https://innostud.am/application/library/4b0d3123.pdf

երեխայի նկատմամբ կարող են կիրառվել ուսումնադաստիարակչական յուրահատուկ մոտեցումներ և ակնկալվել տարբեր կրթական վերջնարդյունքներ: ԱՈՒՊ-ի նպատակը ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման նպատակների և խնդիրների ձևակերպումն է. դրանք կարող են վերագնահատվել և փոփոխվել երեխայի ուսումնառության ընթացքում: ԱՈՒՊ-ները օգտակար են դաստիարակների, ծնողների և սաների համար, քանի որ պարունակում են տեղեկատվություն, թե ինչ է երեխան ադապտացվելու խմբում, և կարող են օգտագործվել ուսումնադաստիարակչական աշխատանքները պլանավորելիս: Ցանկացած պարապմունքի համար ԱՈՒՊ-ը օգնում է պլանավորելու լրացուցիչ օժանդակություն, հարմարեցնելու դասավանդման նյութերը կամ առանձին օգնություն տրամադրելու երեխաների նյութի բովանդակությունը հասկանալու համար: ՄԱԾԱՊ-ը դաստիարակներին օգնում է իմանալու, թե ինչ թերապևտիկ կամ լրացուցիչ, հատուկ կրթական ծառայություններ է ստանում երեխան, ինչպես նաև օգնում է պլանավորելու աշխատանքը երեխայի կարիքներին համապատասխան: ԱՈՒՊ-ի և ՄԱԾԱՊ-ի օգնությամբ ծնողները հստակ տեղեկատվություն են ստանում երեխայի ակադեմիական, սոցիալական և ֆունկցիոնալ առաջընթացի մասին: Առաջընթացի տարեկան վերլուծությունների միջոցով ծնողները կարող են տեսնել, թե արդյոք իրենց երեխան ստանում է այն ուշադրությունը, որն անհրաժեշտ է մասնակցության և առաջընթաց գրանցելու համար: Վերջապես, ԱՈՒՊ-ն ու ՄԱԾԱՊ-ը օգտակար են երեխաներին առաջին հերթին նրանով, որ համապատասխանեցվում են նրանց կրթական կարիքներն ու ծրագրերը[2]:

Անհատական ուսուցման պլանի մոդելն օգտակար է, որովհետև բոլոր որոշումները (որտե՞ղ կկազմակերպվի երեխայի ուսումնառությունը, ի՞նչ միջամտությունների կարիք կունենա սանը, որքա՞ն ժամանակ կտրամադրվի այս կամ այն գործողությանը և այլն) կայացվում են երեխայի ուսումնառության անհատական նպատակներին

---

[2] Ներառական կրթության ռազմավարություններ, Դասագիրք Մինեսոթայի համալսարանի խմբագիրների կազմ 2019, էջ 86
https://www.unicef.org/armenia/media/3501/file/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf

համապատասխան։ Ընտանիքի (երեխան ներառյալ) մասնակցությունը ԱՈՒՊ-ի կազմման գործընթացին ամենակարևոր գործոններից է։ Չնայած դաստիարկները և գնահատող փորձագետները լավ գիտեն երեխաներին, երեխաների կյանքի առաջնային փորձագետները նրանց ծնողներն են և իրենք՝ երեխաները։ ԱՈՒՊ-ը կազմելիս ներկայումս ծնողներից խնդրում են նկարագրական տեղեկություններ տալ իրենց երեխայի ֆունկցիոնալության ընթացիկ մակարդակների, նախասիրությունների, նրա համար տհաճ բաների մասին և այլն։ ԱՈՒՊ-ի երեք առանցքային առանձնահատկություններն են՝ ԱՈՒՊ -ը

1. սահմանում է երեխաների անհատական նպատակները,
2. նախատեսում է հատուկ ծառայություններ, որոնք երեխան կարող է ստանալ իր անհատական նպատակներին հասնելու համար,
3. պահանջում է դաստիարակների, մասնագետների և ծնողների համագործակցություն[3]։

Այսպիսով, ԱՈՒՊ-ը ամենակարևոր գործիքներից է, որով կարելի է օգնել ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական հատուկ կարիքները բացահայտելու և իրականացնելու իրենց կրթության իրավունքը նախադպրոցական ուսումնական հաստատությունում։ ԱՈՒՊ-ը ներկայացնում է կրթության լավագույն գործելակերպի օրինակ, որովհետև կա բազմամասնագիտական թիմ, որը գաղափարներ է տալիս երեխաների նպատակների վերաբերյալ։

Ներառական կրթության համակարգում առանձնահատուկ կարևոր են երեխայի մասին տեղեկատվության փոխանակումն ու ճշգրիտ գնահատումը, ուստի մանկավարժական կազմը պետք է կարողանա գնահատել և ամեն ինչ կազմակերպել՝ ելնելով երեխայի կարիքի վերաբերյալ տեղեկությունից։ Մեր նպատակն է հասկանալ՝ ինչ է պետք երեխային, և ինչ կարողություններ ունի։ Կրթական կարիքի ճշգրիտ գնահատումը ենթադրում է արդյունավետ միջամտություն, որն էլ նպաստում է կրթական նպատակների իրագործմանը։ Պետք է հստակ տեսնել, թե որտեղ է երեխան, և որոշել, թե որն է հաջորդ քայլը։ Գնահատումը կարելի է և պետք է կատարել ամեն օր,

[3] Թադևոսյան Ս. Անհատական ուսուցման պլանի մշակման Մեթոդական ուղեցույց-ձեռնարկ, 2016, 136 էջ։

ամեն շաբաթ, քանզի միայն այս ձևով կարող ենք ճանաչել երեխայի հնարավորությունները: Պետք է տեսնել, թե որտեղ է երեխան, պետք է կարողանալ «կարդալ» երեխային և անհրաժեշտության դեպքում փոփոխել երեխայի հետ աշխատելու մեթոդները և եղանակները: Սակայն մինչ երեխայի առաջընթացը գնահատելը պետք է գնահատել պարապմունքի պլանը, որն ունի 2 չափանիշ՝ ուսումնական պլանի բարդության աստիճանը և միջավայրի կազմակերպումը: Պետք է գնահատել, թե որքանով է առաջադրանքն արդյունավետ սանի համար, որքանով է մատչելի և համապատասխան վերջինիս կարողություններին[4]:

Ներառական կրթության կազմակերպման ժամանակակից ձևերից մեկը էլեկտրոնային կրթությունն է: Կրթության մատչելիությունն ու որակն ապահովելու համար մեծ նշանակություն ունի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառումը, ինչը հնարավորություն է տալիս ապահովել հեռավար փոխգործակցություն: Դիտարկենք ՏՀՏ-ի օգտագործման որոշ ուղղություններ:

Տեխնոլոգիաների օգտագործումը որպես օժանդակ սարքեր թույլ է տալիս հատուկ կարիքներ ունեցող սովորողներին ակտիվորեն մասնակցել կրթական գործունեությանը և հաղորդակցությանը: Տեսողական խանգարումների դեպքում հնարավոր է դառնում տեսողական հաղորդակցությունը՝ օգտագործելով հատուկ ռեժիմներ (տեղեկատվության ընկալում լսողության կամ հպման միջոցով): Ցուցադրվող տեղեկատվությունը հարմարեցնելու համար օգտագործվում է համակարգային ծրագրակազմ, որը թույլ է տալիս մեծացնել նկարների և գրաֆիկական պատկերների չափերը (էկրանի խոշորացույցներ), ինչպես նաև հատուկ ծրագրեր, որոնք թույլ են տալիս ընտրել պատկերների անհրաժեշտ պայծառությունն ու հակադրությունը:

Լսողության խանգարումները մի կողմից դժվարացնում կամ նույնիսկ խանգարում են մարդու կողմից լսողական տեղեկատվության ընկալմանը, իսկ մյուս կողմից՝ թույլ չեն տալիս վերահսկել սեփական խոսքը: Խոսքի արտահայտիչ խախտումները հանգեցնում են դժվարությունների կրթական գործունեության այն ոլորտներում, որոնք կապված են անձի բանավոր գործառույթի հետ (ճանաչողական գործընթացներ, տրամաբանական

---

[4] Salvia Ysseldyke Bolt Assessment in Special and Inclusive Education, 11Th Edsition

գործողություններ, իրականության ընդհանրացումներ աբստրակցիայի տեսքով և այլն): Ժամանակակից ՏՀՏ-ները հնարավորություն են տալիս դաստիարակին ստեղծելու ենթագրերով տեսալսողական նյութ: Տեխնոլոգիաները օգնում են փոխհատուցելու մարմնի բնական գործառույթների բացակայությունը և, այդպիսով, օպտիմալացնելու տեղեկատվության ստացման գործընթացը, ինչպես նաև պայմաններ ստեղծելու գիտելիքների յուրացման համար, ապահովելու շրջակա միջավայրը վերահսկելու ունակություն, թույլ տալու լուծել կրթական և սոցիալական խնդիրները և ապահովելու տեղեկատվական ռեսուրսների հասանելիություն[5]:

ՏՀՏ-ի օգտագործումը դիդակտիկ խնդիրներ լուծելու համար նպաստում է կրթական և մեթոդական գործընթացի մոտեցումների փոփոխությանը և խթանում դասավանդման նոր ռազմավարությունների և գիտելիքների վերահսկման առաջացումը, նպաստում երեխաների մտավոր և ստեղծագործական ներուժի առավելագույն իրացմանը: Բացի այդ, կրթական կազմակերպությունում կանոնավոր պարապմունքներին հաճախել չկարողացող սովորողների կրթական կարիքները բավարարելու համար ՏՀՏ-ն օգտագործվում է որպես հեռավար ուսուցման միջոց: Տեխնոլոգիաները կարող են հատուկ կարիքներով մարդկանց հաղորդակցման միջնորդ հանդիսանալ: Հաղորդակցման դժվարություններ ունեցող օգտատերերի յուրաքանչյուր կատեգորիայի համար պետք է ընտրվեն և հարմարեցվեն հատուկ օժանդակ սարքեր և ծրագրեր[6]:

Ներառական կրթության կազմակերպման համար կարևոր նշանակություն ունի երեխայի առաջընթացի գնահատումը: Դա տվյալների հավաքագրումն է, որի նպատակն սանի գրանցած առաջընթացի վերաբերյալ որոշում կայացնելն է: Երբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան չի հասցնում ծրագիրը և

---

[5] Коликова, Е. Г. Применение технологий инклюзивного образования для создания безбарьерного обучения детей с ОВЗ [Электронный ресурс] : учебнометодическое пособие по предметам естественно-математических и технологических дисциплин / Е. Г. Коликова, Н. Ю. Хафизова ; под ред. Т. В. Уткиной. – Челябинск : ЧИППКРО, 2017. – 72 с. էջ 19
https://www.ipk74.ru/upload/iblock/913/913e0927745644a5632e50881341a616.pdf

[6] Ахметова Д. З., Нигматов З. Г., Челнокова Т. А., Юсупова Г. В. и др. ,Педагогика и психология инклюзивного образования : учебное пособие ,под ред. Д. З. Ахметовой. – Казань : Изд-во «Познание» Института экономики, управления и права, 2013. – 204 с.

զգալիորեն ետ է մնում հասակակիցներից, որոշ մանկավարժներ սկսում են մտածել, որ երեխան չի կարողանում սովորել, և ավելի քիչ են ընդգրկում ընդհանուր կրթական գործընթացում: Իրականում կրթական խնդիրների մեծամասնությունը պայմանավորված է երեխայի հանդեպ աստիարակի ակնկալիքների և երեխայի ընդունակության անհամապատասխանությամբ: Ընդ որում՝ ակնկալիքները կարող են երեխայի ընդունակություններից և՛ բարձր լինել և՛ ցածր: Ցածր սովորաբար լինում են, երբ երեխայի տարբերությունը հասակակիցներից ակնհայտ է և արտաքուստ տեսանելի: Պատկերը լիովին փոխվում է, երբ ստուգում ենք երեխայի իրական կարողությունները, գրանցում իրական խնդիրը և նոր միայն առաջադրանքը կառուցում՝ հիմնվելով երեխայի կարիքի մասին մեր գիտելիքի վրա: Սա առանցքային մոտեցում է, քանի որ եթե ճիշտ մոտեցմանը զուգահեռ իրականացվի գնահատում, ապա ակնհայտ կդառնա, որ աշակերտի կողմից գրանցվել է տեղաշարժ, ինչը շատ կարևոր է ինչպես նրա, այնպես էլ ուսուցչի համար: Շատ հաճախ, երբ երեխան զարգացման որևէ առանձնահատկություն է ունենում, դաստիարակներից շատերը պիտակավորում են նրան որպես «խնդիրով երեխա» և հակվում են ընդհանրացնելու այդ «խնդիրը», ինչն էլ ավելի է բարդացնում աշխատանքը: Իրականում ամեն ինչ շատ ավելի հեշտ կլինի, եթե փորձենք վերհանել հենց այն խնդիրները, որոնք խանգարում են երեխայի ուսումնառությանը և կրթական գործընթացին ներգրավմանը, պարզենք այն հնարավորություններն ու կարողությունները, որոնք երեխան ունի, ապա վերլուծենք և գտնենք տարբերակներ կրթական գործընթացը բոլորի համար արդյունավետ դարձնելու համար[7]:

Երեխայի առաջընթացի գնահատման գործընթացի մեթոդներն են[8]՝

---

[7] Պետրոսյան Ս., Ներառական կրթությունը գործնականում: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ասողիկ, 2018, 100էջ: էջ 29 https://guidebookforteachers.files.wordpress.com/2019/01/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8.pdf?fbclid=IwAR1idxsjy9SmW-AgNkv9U_ZoewYxbTgmWaUSotDfnnTxt72_6gwjlKUCeUk

[8] ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, 2013: Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն: Doi: http://www.osf.am/wpcontent/uploads/2013/11/Inclusive-education-report_ARM-without-tools.pdf

- Սկրինինգ/առաջնային ախտորոշում: Շատ կարևոր է հնարավորինս վաղ հայտնաբերել երեխաների ֆիզիկական, ակադեմիական և վարքային խնդիրները: Խնդիրների վաղ հայտնաբերումը կանխարգելում է հետագա բարդությունները: Տեսողական խնդիրների վերհանման դեպքում, օրինակ, լինզաների և ակնոցների շնորհիվ հնարավոր է արագ վերականգնել երեխայի առաջադիմությունը:
- Թեսթավորում: Թեսթավորումը գնահատման տեխնիկաներից մեկն է, որն օգտագործվում է տվյալների հավաքագրման համար. այն կազմված է որոշակի հարցերից և անցկացվում է անհատների կամ խմբի հետ՝ արդյունքները հաշվելու նպատակով: Արդյունքների հաշվումը թեսթավորման վերջնական արդյունքն է: Գնահատման գործընթացում կիրառվում են դիտարկման տվյալները, անամնեզի հավաքումը, թեսթավորումը և մասնագիտական դատողությունները:
- Դիտարկում: Բնական միջավայրում սաների դիտարկումն օգնում է վերհանելու երեխայի ուսումնական, վարքային և սոցիալական հարմարման խնդիրները: Տարբեր միջավայրերում կատարված դիտարկումները կարող են անգնահատելիորեն մեծ տեղեկություն տրամադրել երեխայի վերաբերյալ:
- Հարցազրույցներ: Հարցազրույցները կիրառվում են երեխաների մտածողության և վարքի օրինաչափությունների վերաբերյալ ավելի ստույգ տեղեկություն ստանալու համար: Կիրառվում են մշակված, չմշակված, պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներ:
- Մանկավարժական խորհրդակցություն: Դաստիարակները կարող են օգտագործել դիտարկումներից և հարցազրույցներից ստացված տեղեկությունը ուսումնական նյութը պլանավորելու ժամանակ: Այս տեղեկությունն օգնում է որոշելու, թե ինչպես կարելի է կազմակերպել ուսուցումը և, ելնելով պարապմունքի նպատակներից, ինչպիսի տեխնիկաներ կիրառել:
- Առաջընթացի գնահատում: Գնահատելիս չափազանց կարևոր է գրավոր արձանագրել երեխայի առաջընթացը: Այս արձանագրությունը ծառայում է որպես գործիք և թույլ տալիս վերլուծել տվյալները և որոշել՝ առաջընթացն ակներև է, թե ոչ: Արդյունավետ կիրառման դեպքում առաջընթացի վերահսկումը հնարավորություն է

ընձեռում երեխայի առաջընթացի մասին գրավոր արձանագրությունը ներկայացնել ծնողներին, ղեկավարներին, այլ դաստիաարկներին և ամենակարևորը՝ հենց երեխային, որն էլ նպաստում է բավարարվածության զգացողությանը:

Այսպիսով, ներառական կրթության արդյունավետ իրականացումը նախ և առաջ պայմանավորված է կրթության այս ձևի գիտամեթոդական աջակցությամբ, ծրագրային ու դիդակտիկ նյութերի և ուսումնական միջոցների մշակման ամենահրատապ անհրաժեշտությամբ: Ներառական կրթության գործնական զարգացումը չի կարող ապահովվել առանց ներառական պրակտիկայում մեթոդական մշակումների, ծրագրային ապահովման, գործունեության կազմակերպման մեթոդական ուղեցույցների և ներառական գործընթացում ընդգրկված ուսումնական հաստատություններում հոգեբանական և մանկավարժական աջակցության մշտական ներդրման:

1.2. ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱԴԱՊՏԱՑԻԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ

ԿԱՊԿՈՒ երեխաներն ունեն ընկալման զարգացման զգալիորեն ցածր մակարդակ, ինչը հանգեցնում է շրջապատող աշխարհից ստացված զգայական տեղեկատվության մշակման ավելի երկար ժամանակի անհրաժեշտությանը: Ըստ Վ.Ն. Բրեյթֆելդի՝ երեխայի սահմանափակ հնարավորությունները կարող են արտահայտվել առարկաների և պատկերների ճանաչման դժվարությամբ, լսողական ընկալումներով, պլանավորման գործընթացների անբավարարությամբ և այլն: Նման երեխաներին կարող են բնորոշ լինել ցրվածությունը, կամային ջանքերի բացակայությունը,ինչպես նաև ուշադրությունը փոխելու դժվարությունները: Բացի այդ, հաշմանդամություն ունեցող երեխան կարող է ունենալ հիշողության, խոսքի, գիտելիքների, ունակությունների և կարողությունների ձևավորման այնպիսի մակարդակ, որը անբավարար է իր տարիքի

համար[9]: Հետևաբար, ԿԱՊԿՈՒ աշակերտների մոտիվացիան ձևավորելիս ուսուցիչը պետք է հիշի, որ այն ունի «հատուկ բնույթ», և դա առաջին հերթին ուսուցչի և աշակերտի միջև համագործակցության առաջացումն ու ամրապնդումն է: Բացի այդ, կարևոր է հիշել, որ ցանկացած երեխայի կայուն մոտիվացիայի ձևավորմանը նպաստում են նրա հանդեպ սերն ու համբերությունը:

Ներառական կրթության մեջ «հարմարվողականություն» հայեցակարգը անհրաժեշտ է դիտարկել երկկողմանի՝ միջավայրի փոփոխություն անհատի կարիքներին համապատասխան և անհատի ներքին փոխակերպում, հարմարվելու ձգտում:Դա համապատասխանում է նման երեխաների՝ հանրակրթական հաստատություն մուտք գործելու գործընթացին և համատեղ ուսուցմանը[10]: Եթե մենք դպրոցն ընկալում ենք որպես սոցիալականացման հիմնական հաստատություն, ապա դպրոցի հարմարեցումը ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալական ներառման գործընթացի մի մասն է: Այս գործընթացը հիմնարար նշանակություն ունի սոցիալական կյանքին հետագա հարմարվելու համար՝ վարքագծի և վերաբերմունքի, կարողությունների և սոցիալական հմտությունների ձևավորման միջոցով ինտեգրվելով հասարակությանը: Բացի այդ, ԿԱՊԿՈՒ երեխաների դպրոցական հարմարեցումը թույլ է տալիս մյուս աշակերտներին ուսուցիչների ղեկավարությամբ ճիշտ ընկալել և հասկանալ այդ երեխաների խնդիրները[11]:

Հեղինակներից շատերը նախադպրոցական ադապտացիան հասկանում են որպես երեխայի վարքագծի փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են, որպեսզի նա կարողանա հաղթահարել ուսումնական ծրագիրը և իր վարքագիծը համապատասխանեցնել մանկապարտեզի կանոնների հետ՝ ընդունելով սանի կարգավիճակն ու դերը:

---

[9] Брайтфельд, В.Н. Формирование мотивации учебной деятельности младших подростков. / В.Н. Брайтфельд. – М.: Дефектология, 2000, էջ 65

[10] Мигунова И.Г., Позывайлова М.Л. Психолого-педагогическое сопровождение при подготовке ребёнка с ограниченными возможностями к обучению в школе: теоретико-методологический аспект / Сборник материалов II Международной научно-практической конференции «Инклюзивное образование: практика, исследования, методология» / Отв. ред. С.В. Алехина. — М.: Буки Веди, 2013. — 712 с.; Сави

[11] Ефтоди, А., Балан, А. Инклюзивное образование. Методическое пособие для непрерывного обучения дидактических кадров, работающих в области инклюзивного образования детей. Ч. 3. Кишинев: б. и., 2016 128 с.

Ադապտացիան մշտական պայքար է մի կողմից՝ անձնական կարիքների և պահանջների, մյուս կողմից՝ նախադպրոցական և հետագայում դպրոցական վարքագծի կանոնների, օրվա նոր ռեժիմի միջև:

Այս համատեքստում ներառումը երեխայի՝ նախադպրոցական կյանքի պայմաններին, կանոններին ու պահանջներին հարմարվելու գործընթացն է:Երեխայի հարմարեցման աստիճանը այնքան է,որքան նա տիրապետում է անհրաժեշտ հմտություններին և կարողանում բավարարել դպրոցական կրթության պահանջներն ու ակնկալիքները: Այս երկու գործոնների անհամապատասխանությունը, ենթադրում է միջամտություն հարմարման գորընթացին,որն իր հերթին կարող է կապված լինել երեխայի հմտությունների պակասի շտկման կամ բուն դպրոցական իրավիճակի պահանջների և բնութագրերի փոփոխության հետ[12]:

Այսպիսով, ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացման ամենաարդյունավետ մանկավարժական պայմաններն են.

- ԿԱՊԿՈՒ երեխաների ինքնագիտակցության ձևավորման համար ուսուցման իրազննական, տեխնիկական միջոցների օգտագործման հնարավորությունների ստեղծում.
- ներառական կրթության ակտիվ մեթոդների և ձևերի օգտագործում, որը նպաստում է ԿԱՊԿՈՒ երեխաների ինքնագիտակցության հիմնական բաղադրիչների զարգացման պայմանների ստեղծմանը.
- ինտերակտիվ մանկավարժական տեխնոլոգիաների (պորտֆոլիո, Դալթոնի պլան և այլն) համակարգված ներդրում՝ ակտիվացնելով ԿԱՊԿՈՒ երեխաների մտավոր գործունեությունը և դրանով իսկ անուղղակիորեն ձևավորելով նրանց ինքնագիտակցությունը.
- արտադասարանական հոգեբանական գործունեության համակարգի (ընդլայնում ,անհատական և խմբային գործունեություն, երեխայի և նրա ծնողների ախտորոշում և խորհրդատվություն, հանդուրժողականության զարգացում, ինքնագնահատականը շտկող անհատական աշխատանք և այլն):

---

[12] Крившенко, Л. П. Педагогика. М.: Проспект, 2005 429 с.

Գլուխ 2. Հետազոտական աշխատանք

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները կարող են և պետք է սովորեն և զարգանան սովորական մանկապարտեզում՝ իրենց հասակակիցների հետ միասին: Այս երեխաների ինտեգրված կրթության համար անհրաժեշտ է իսպառ վերացնել երեխաների միջև եղած հեռավորությունը: Շատ կարևոր է, երբ մանկապարտեզը դիտարկվում է ոչ միայն որպես երեխաների կրթության հաստատություն, այլ որպես կենսատարածք, որտեղ անհրաժեշտ է իրականացնել բնական, խթանող անցում «փաստացի զարգացման գոտուց դեպի մերձավոր զարգացման գոտի»: յուրաքանչյուր երեխայի. Այստեղ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները խմբում իրենց հասակակիցների հետ հավասար հիմունքներով կատարում են պահանջները: Համատեղ կրթությունը և դաստիարակությունը պետք է սկսվեն նախադպրոցական տարիքից:

Ավարտական աշխատանքի շրջանակում հետազոտություն է իրականացվել Երևանի 10 մանկապարտեզներում՝ նպատակ ունենալով ուսումնասիրել նախադպրոցական ուսումնական հաստատություններում ռեսուրսային՝ թե՛ մարդկային-մասնագիտական, թե՛ նյութատեխնիկական, թե՛ շենքային, համապատասխանեցումը ԿԱՊԿՈՒ երեխաների ինտեգրմանը, ինչպես նաև դիտարկվել է սոցիալ-հոգեբանական միջավայրը:

Արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ.

- Մանկապարտեզները հիմնականում չունեին շենքի ներքին հարմարեցվածություն: Լավագույն դեպքում առկա էր թեքահարթակ՝ միայն մուտքի մոտ:
- Խնդրահարույց էր նաև երեխայի առանձնահատուկ կրթական կարիքների գնահատման գործընթացը:
- Երևանի մանկապարտեզներում լավագույն դեպքում գործում է ոչ թե ներառական կրթության, այլ ինտեգրված կրթության մոդելը, մասնավորապես ԿԱՊԿՈՒ երեխաների

նկատմամբ կիրառվում է տարբերակված մոտեցում՝ սկսած ԱՈՒՊ-ից մինչ «ներառականների համար» միջոցառումների կազմակերպումը:

- Մանկապարտեզներում նկատվում էր բազմամասնագիտական թիմի հետ աշխատանքի ակտիվացման անհրաժեշտություն, քանզի դաստիարակների կողմից հստակ նկատվում էր ԿԱՊԿՈՒ երեխայի հետ աշխատանքի թերացում, որը հաճախ ուներ օբյեկտիվ պատճառներ,
- Միևնույն ժամանակ առկա են խնդիրներ նաև բազմամասնագիտական թիմի անդամների քանակի, ինչպես նաև մասնագիտական կարողությունների հետ կապված, մասնավորապես հստակ դիտարկվում էր տարբեր խնդիրներ ունեցող ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի նույնատիպ, հաճախ ոչ արդյունավետ աշխատանք:
- Անհրաժեշտ է նաև ակտիվացնել դաստիարակ-ուսուցիչ փոխհարաբերությունները՝ ներառելով ոչ միայն ԿԱՊԿՈՒ սաների ծնողներին:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառական կրթության ներդնումից բացի, անհրաժեշտ է իրականացնել դաստիարակների պարբերաբար վերապատրաստում: Ներկայացնենք այդ գործընթացին նպաստող մի շարք ուղղություններ՝

- Գործնական գիտելիքների ավելացում: ՆԿ կազմակերպման փաստացի իրականացումից ի վեր ի հայտ են գալիս բազմաթիվ գործնական հարցեր, որոնց պատասխանները ուսուցիչները չունեն:
- Պրոֆիլային վերապատրաստումների կազմակերպում: Քանի որ բազմամասնագիտական թիմը բաղկացած է տարբեր մասնագետներից, նրանցից յուրաքանչյուրը կարիք ունի ձեռք բերելու նոր գիտելիքներ և հմտություններ, որոնք կվերաբերվեն իրենց նեղմասնագիտական գործառույթներին:
- Լրացուցիչ վերապատրաստումների հասանելիության բարձրացում:
- Վերապատրաստումների ինֆորմացիոն պորտալի պարբերաբար թարմացում:
- Հետադարձ կապի գոյություն ունեցող մեխանիզմների ուժեղացում: Բազմամասնագիտական թիմի անդամների գերակշիռ մեծամասնության համոզմամբ այսօր պետական վերապատրաստող կազմակերպությունները չունեն հետադարձ կապի

ինստիտուցիոնալ մեխանիզմներ: Դրանց բացակայությունը թույլ չի տալիս հետևել, թե որքանով և ինչպես են տրամադրված գիտելիքների կիրառվում գործնականում և շտկումներ կատարել ծրագրերում:

- ՆԿ վերաբերյալ նյութերի հասանելիության բարձրացում: Վերապատրաստումներից հետո տրամադրվող նյութերը ժամանակ անց համալրման կարիք ունեն: Դաստիարակներից շատերը չգիտեն, թե ում կարելի է դիմել՝ նոր գրականություն ձեռք բերելու համար:

Այսպիսով, ամփոփելով հետազոտության արդյունքները, կարող ենք նշել, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին իրենց հասակակիցների միջավայրում հաջող ինտեգրվելու համար անհրաժեշտ է.

- զարգացման համար աջակցող միջավայրի ստեղծում, համապատասխան ծրագրային և մեթոդական աջակցություն,
- մասնագետների (դաստիարակներ, հատուկ դայակներ, հոգեբաններ, լոգոպեդներ) փոխազդեցություն,
- մասնագետների փոխգործակցություն հատուկ կրթական կարիք ունեցող երեխաների ծնողների հետ:

Եզրակացություն

Ուսումնասիրելով սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման գործիքների կիրառումը, ինչպես նաև մեկնաբանելով ԿԱՊԿՈՒ սաների ուսման մոտիվացիան և հարմարումը նախադպրոցական ուսումնական հաստատությանը և նրանց ինքնագիտակցության ձևավորման մանկավարժական պայմանները ներառական կրթության համատեքստում՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Ներառական կրթությունը ենթադրում է, որ սաներն իրենց ողջ բազմազանությամբ ու յուրատեսակությամբ սովորում են կողք-կողքի, նույն մանկապարտեզում և խմբում: Ներառական կրթությունը շատ բարձր է գնահատում ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սանի ներդրումը: Սակայն այս սահմանումը, թերևս, թաքցնում է կրթական ներառում երևույթի բարդությունը: Ներառման սահմանումը ժամանակի ընթացքում փոփոխվել է, ինչի պատճառով ավելի է մեծացել պատշաճ ներդրումների, ռազմավարությունների և չափորոշիչների մշակման պահանջը: Առկա են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական և կրթական հմտությունների զարգացման բազմաթիվ խնդրահարույց հարցեր ու մարտահրավերներ, այդ թվում՝ ուսուցիչների կրթությունը և վերապատրաստումները, դպրոցների սոցիալական ու ֆիզիկական միջավայրի հարմարեցումները, ինչպես նաև ծնողների ակնկալիքները, մոտեցումները և պատկերացումները:

2. Ներառական կրթության կազմակերպման էությունը ներառում է երկու փոխկապակցված բաղադրիչներ՝

- ներառական կրթության մանկավարժահոգեբանական մեթոդների, կրթության բովանդակության և գնահատման սկզբունքների ու մոտեցումների մշակում,
- միջավայրի հատուկ պայմանների ստեղծում և համագործակցված աշխատանքի իրականացում:

3. «Ներառումը» երեխայի՝ ուսումնադաստիարակչական կյանքի պայմաններին, նորմերին ու պահանջներին հարմարվելու գործընթացն է: Այն, թե

որքանով է երեխան տիրապետում անհրաժեշտ հմտություններին և կարողանում է բավարարել այն պահանջներն ու ակնկալիքները, որոնք դրված են նախադպրոցական կրթության ժամանակ, կորոշի, թե որքանով է նա հարմարեցված դրանց:

4. Ներառական կրթության մեջ «հարմարվողականության» հայեցակարգը կարելի է դիտարկել երկկողմանի բնույթով, որը ցույց է տալիս երկու հակադիր ուղղություններ՝ անհատի կարիքներին համապատասխան միջավայրի փոփոխություններ և անհատի ներքին փոխակերպումներ, հարմարվելու ձգտում: Այսօր ԿԱՊԿՈՒ երեխաների ինտեգրումը հիմնական դպրոցներին համաշխարհային միտում է: Այս միտումի հետ կապված՝ արդիական են համագործակցային ուսուցման պայմանների հետ կապված տարբեր հարցեր:

5. Ներառական կրթության գործընթացում հաշմանդամություն ունեցող երեխաների ինքնագիտակցության ձևավորման ամենաարդյունավետ մանկավարժական պայմաններն են.

- ներառական կրթության գործընթացում ԿԱՊԿՈՒ երեխաների մոտ ինքնագիտակցության ձևավորման համար տեխնիկական ուսումնական միջոցների օգտագործման դիդակտիկ հնարավորությունների ստեղծում.
- ներառական կրթության կազմակերպման ամենաակտիվ մեթոդների և ձևերի օգտագործումը, որը նպաստում է ԿԱՊԿՈՒ երեխաների ինքնագիտակցության հիմնական բաղադրիչների զարգացման համար պայմանների ստեղծմանը.
- ներառական կրթության գործընթացում ինտերակտիվ մանկավարժական տեխնոլոգիաների համակարգված ներդրում.
- արտաուսումնական հոգեբանական գործունեության համակարգի ընդլայնում:

Գրականության ցանկ

1. Թադևոսյան Ս. Անհատական ուսուցման պլանի մշակման Մեթոդական ուղեցույց-ձեռնարկ, 2016, 136 էջ:

2. ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, 2013: Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն: Doi: http://www.osf.am/wpcontent/uploads/2013/11/Inclusive-education-report_ARM-without-tools.pdf

3. Ներառական կրթության ռազմավարություններ, Դասագիրք Մինեսոթայի համալսարանի խմբագիրների կազմ 2019, էջ 86 https://www.unicef.org/armenia/media/3501/file/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf

4. Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ձեռնարկ. -Երևան: 2017. 146 էջ: էջ 133 https://innostud.am/application/library/4b0d3123.pdf

5. Պետրոսյան Ս., Ներառական կրթությունը գործնականում: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Ասողիկ, 2018, 100էջ: էջ 29 https://guidebookforteachers.files.wordpress.com/2019/01/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8.pdf?fbclid=IwAR1idxsjy9SmW-AgNkv9U_ZoewYxbTgmWaUSotDfnnTxt72_6gwjlKUCeUk

6. Ахметова Д. З., Нигматов З. Г., Челнокова Т. А., Юсупова Г. В. и др. ,Педагогика и психология инклюзивного образования : учебное пособие ,под ред. Д. З.

Ахметовой. – Казань : Изд-во «Познание» Института экономики, управления и права, 2013. – 204 с.

7. Брайтфельд, В.Н. Формирование мотивации учебной деятельности младших подростков. / В.Н. Брайтфельд. – М.: Дефектология, 2000, Էջ 65

8. Ефтоди, А., Балан, А. Инклюзивное образование. Методическое пособие для непрерывного обучения дидактических кадров, работающих в области инклюзивного образования детей. Ч. 3. Кишинев: б. и., 2016 128 с.

9. Коликова, Е. Г. Применение технологий инклюзивного образования для создания безбарьерного обучения детей с ОВЗ [Электронный ресурс] : учебнометодическое пособие по предметам естественно-математических и технологических дисциплин / Е. Г. Коликова, Н. Ю. Хафизова ; под ред. Т. В. Уткиной. – Челябинск : ЧИППКРО, 2017. – 72 с. Էջ 19 https://www.ipk74.ru/upload/iblock/913/913e0927745644a5632e50881341a616.pdf

10. Крившенко, Л. П. Педагогика. М.: Проспект, 2005 429 с.

11. Мигунова И.Г., Позывайлова М.Л. Психолого-педагогическое сопровождение при подготовке ребёнка с ограниченными возможностями к обучению в школе: теоретико-методологический аспект / Сборник материалов II Международной научно-практической конференции «Инклюзивное образование: практика, исследования, методология» / Отв. ред. С.В. Алехина. — М.: Буки Веди, 2013. — 712 с.; Сави